ցունք ոմանք որ ոչն հնազանդէին, անարգեալ զնա՝ զայլ ոմն անդէն ի հանդէսն աւագերէց[1]) հաստատէին, և զվեց եկեղեցոյ միաբերթ կնիքն ի ճակատ թղթին երևեցուցանէին։ Եւ պատճեն թէ Համայն քահանայք և աթոռակալք և երեսփոխանք և իշխանք վեց եկեղեցոյ քաղաքիս ի մի վայր ժողովեալ, ուխտ և դաշինս արարեալ, հոգով և մարմնով կանգնեալ վասն Թուրմայ հերձուածողի, զի զչարութիւն նորին ի կառափ նորա հարկանիցեմք, և թէ՝ ըստ այսմ որքան ըստակ երթայ, թէ շատ թէ քիչ, և մեք վերոյ գրբեալքս քէֆիլ եւ երաշխաւոր եմք։ Եւ յետ աւուրց բազում երթեւեկութեամբ առ Աստուածատուր վարդապետն թէ Վասն քո եւ վասն Սուրբ Տանն է ջան մեր, դու ևս կնքով ընդ թղթոյն հաղորդեաց ընդ մեզ։ Եւ նա կնքով գրեաց՝ Վասն այս բանիս այնքան աշխատեցայց, մինչև վճարեցից զսուսա ի պարտուց։

Եւ ոմանք ի նոցանէ երևելիք էին առաւել, որ յերիվարս չարին արշաւեալ այնքան, մինչեւ յղձանաց իւրեանց հասին որպէս և կամեցան, բայց յետոյ անկեալ յերիվարաց՝ բեկեալ ջարդեցան ամենայն ոսկր նոցա։ Հանելով զերկիւղն Աստուծոյ ի սրտից իւրեանց, մոռանալով զդատաստանն Աստուծոյ և զբան նորա թէ Զայր արիւնահեղ պիղծ առնեմ, և թէ Որ սրով (պարզ) սրով անկցի, և թէ Որ հեղու զարիւն մարդոյ՝ փոխանակ եւ հեղցի արիւն նորա, եւ թէ զՄի՛ սպաներն, եւ զայլ օրէնս եւ զմարգարէս զառաքելականս եւ զհայրապետականս։ Նմանեցին այնոցիկ որք զառաջնորդս եւ զհայրապետս սպանին պէս պէս նախատանօք, յորոց արարմանց բարկացեալ՝ տայ զիշխանութիւն եւ զթագաւորութիւն այլ ազգաց. օտարք կերեալ զվաստակս մեր առաջի աչաց մերոց, ի թըշ-

1) աւարերէց.